ՀԱԷԿ» ՓԲԸ-ը գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանի
2023թ. հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 2-ը
ք. Մինսկ (Բելառուսի Հանրապետություն) գործուղման հաշվետվություն

Գործուղման նպատակը

Շահագործող կազմակերպությունների համաշխարհային ասոցիացիայի Մոսկովյան կենտրոնի Կառավարիչների խորհրդի (այսուհետ՝ ՇԿՀԱ ՄԿ ԿԽ) նիստի կազմակերպում և հերթական ընդհանուր ժողովին մասնակցություն

Գործուղման նկարագիրը և արդյունքները

Համաձայն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի օգոստոսի 25-ի թիվ 1700-Ա հրամանի՝ ս/թ հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 2-ը գործուղվել եմ ք. Մինսկ (Բելառուսի Հանրապետություն)՝ մասնակցելու վերոնշյալ միջոցառումներին:

2023թ. հոկտեմբերի 30-ին ժամանելուց հետո կազմակերպվել է ՇԿՀԱ ՄԿ ԿԽ մասնակիցների հավաք և առանձին կազմակերպչական հարցերի քննարկում, որոնց մասնակցել է ՇԿՀԱ ՄԿ ղեկավար կազմը: Ուշադրություն է հրավիրվել այն հանգամանքին, որ վերջին շրջանում, հատկապես քաղաքական դրդապատճառներով պայմանավորված, ՄԿ-ից ՇԿՀԱ Փարիզի կենտրոն են տեղափոխվել Ուկրաինայի և Եվրոպայի խոհրդային դիզայնով կառուցված ատոմակայանները, ինչը իր բացասական ազդեցությունն է ունեցել թե՛ ներկայումս գործընկերային ստուգումների խմբերի համալրման (այդ կայաններից 51 մասնագետի փոխարեն գործընկերային ստուգմանը տարբեր պատճառաբանություններով տրամադրվել է ընդամենը 4 մասնագետ), և թե՛ ՄԿ ֆինանսավորման կրճատման առումով: Մշակվել են մեղմելու մեխանիզմներ, որոշում է ընդունվել դիմել ՇԿՀԱ կենտրոն՝ ԱԷԿ-ների անվտանգության միջոցառումների բարձրացման ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկելու առաջարկությամբ:

Հիմնական աշխատանքներն իրականացվել են հոկտեմբերի 31-ին, իսկ նոյեմբերի 1-ին կայացել է տեխնիկական շրջայց Բելառուսի ԱԷԿ:

2023թ. հոկտեմբերի 31-ին, որպես ՇԿՀԱ ՄԿ Կառավարիչների խորհրդի նախագահ, անցկացրել եմ Կառավարիչների խորհրդի նիստը: Կազմակերպչական հարցերի քննարկումից հետո նիստի մասնակիցներն անցել են ծրագրով նախատեսված թեմաների քննարկմանը:

Մասնավորապես, ԿԽ նոր ընտրված քարտուղար Լ. Զավյալովը ներկայացրել է նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքը:

Հաջորդիվ հնչել է իմ ելույթը՝ նվիրված ՇԿՀԱ ՄԿ գործունեության նկարագրին և գնահատմանը, ինչպես նաև վերջին կիսամյակում (2023թ. ապրիլ-հոկտեմբեր) Մոսկովյան կենտրոնի կողմից ընդունված որոշումներին:

Մոսկովյան կենտրոնի տնօրեն Վ.Ակսյոնովը ներկայացրել է կազմակերպության գործունեության ներքին ինքնագնահատման արդյունքները:

ՇԿՀԱ ՄԿ ղեկավարությունը (Ա. Կիրիչենկո, Վ. Լուկյանովա, Ս. Վիբորնով) մասնակիցներին է ներկայացրել կազմակերպության աշխատանքային պլանի առավել նշանակալի ուղղությունների իրականացման արդյունքները՝

1. «Միասնություն» ռազմավարական փաստաթղթի,

2. «ՇԿՀԱ ՄԿ ռազմավարությունը. նոր պայմաններում աշխատելու ձևերը» փաստաթղթի,

3. «Կատարելության կուրս» նախաձեռնության:

Լ. Զավյալովը և գլխավոր հաշվապահ Մ. Պանինան մասնակիցներին առաջարկել են ուսումնասիրել կազմակերպության աշխատանքի պլանավորման և ֆինանսական վիճակի վերաբերյալ հարցերը:

Վ. Ակսյոնովն ամփոփել է վերը նշված բոլոր հարցերը «ՇԿՀԱ ՄԿ կազմակերպական կայունության ապահովմանն ուղղված կոմպենսացնող միջոցառումների պլան 2023-2025թթ. համար» ելույթով:

Այնուհետև ԿԽ մասնակիցների քվեարկությանն եմ առաջարկել քննարկված հարցերից առավել արդիական 6 հարցի վերաբերյալ բանաձևերի նախագծեր: Առաջարկված բոլոր բանաձևերն ընդունվել են միաձայն, այդ թվում և ՇԿՀԱ Մոսկովյան կենտրոնի անդամակից կազմակերպությունների շարքում «Գիտություն և նորարարություններ» մասնավոր հաստատության ընդգրկման հարցը Ընդհանուր ժողովի քվեարկությանը դնելու որոշումը:

Հոկտեմբերի 31-ին կայացել է նաև Մոսկովյան կենտրոնի Ընդհանուր ժողովը, որի ընթացքում հաստատվել են՝

- ՇԿՀԱ ՄԿ նախորդ Ընդհանուր ժողովների որոշումների կատարման հաշվետվությունը:
- ՇԿՀԱ ՄԿ Վերստուգիչ հանձնաժողովի տարեկան հաշվետվությունը:
- ՇԿՀԱ ՄԿ Վերստուգիչ հանձնաժողովի նորընտիր կազմը:
- «ՇԿՀԱ ՄԿ պահուստների վերաբերյալ կանոնակարգ» փաստաթուղթը:
- ՇԿՀԱ Կառավարիչների խորհրդի նոր կազմի ընտրությունը:
- ՇԿՀԱ Մոսկովյան կենտրոնի կազմում «Գիտություն և նորարարություններ» մասնավոր հաստատության ընդգրկումը:

Ընդհանուր ժողովի աշխատանքի ավարտով երկու օրակարգերը համարվել են սպառված:

Ընդհանուր հաշվով ՇԿՀԱ ՄԿ նիստին և Ընդհանուր ժողովին մասնակցել է Ռուսաստանի, Բելառուսի, Հայաստանի, Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի, Թուրքիայի տարբեր կազմակերպությունների ավելի քան 25 ներկայացուցիչ:

Միջոցառումների ծրագրերից դուրս ԿԽ մասնակիցները քննարկել են ասոցիացիայի՝ 2023թ. ապրիլ-հոկտեմբեր ամիսների գործունեության առանձին ուղղություններ, որոնք ոլորտային ընդհանուր բնույթ են կրում և պետք է հաշվի առնվեն տարածաշրջանային կենտրոնների կողմից:

Մասնավորապես քննարկվել են՝

- Ուկրաինայի ԱԷԿ-ներում տիրող վիճակը,
- ՇԿՀԱ Լոնդոնյան կենտրոնի բյուջեն,
- ՇԿՀԱ տարածաշրջանային կենտրոնների և Լոնդոնյան կենտրոնի գործունեության և «Կատարելության կուրս» նախաձեռնության իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ակտուալացումը, ՇԿՀԱ Շանհայի կենտրոնի զարգացումը:
- Նոր անդամների ներգրավմանը վերաբերող հարցերը (Բանգլադեշ):

Ինչ վերաբերում է Ուկրաինային՝ ՇԿՀ ասոցիացիայում ստեղծված է Զապորոժիեի ԱԷԿ-ի (ԶԱԷԿ) հարցերով աշխատանքային խումբ, որն իր գործունեությունը կորդինացնելու է ստորև նշվածի արդյունքներով՝

- ամենամսյա խորհրդակցություններ,
- փորձի կուտակում և քաղված դասերի վերաբերյալ տեղեկատվության մշակում,

- ԱԷՄԳ-ի հետ համագործակցություն,
- ոչ ստանդարտ իրավիճակներում ՋԱԷԿ-ի աշխատանքի կայունության հարցերի վերաբերյալ դիրքորոշում, որը ձևավորվել է ԱԷԿ-ների տնօրենների կոնֆերանսի և «Բարձր օղակի տեխնիկական ղեկավարների ֆորումի» ընթացքում, և ՋԱԷԿ-ի աշխատանքի կայունության սկզբունքների մշակման անհրաժեշտության վերաբերյալ որոշում:

Որպես Լոնդոնյան կենտրոնի ֆինանսական հարցերի լուծում՝ հաստատվել է վերջինիս բյուջեն՝ 11,6մլն ֆունտ ստերլինգ, ինչի արդյունքում 29%-ով ավելանում է անդամավճարի չափը:

2023 թվականի հոկտեմբերի 26-ին Աբու Դաբի քաղաքում (Արաբական Միացյալ Էմիրություններ) կայացած ԿԽ նիստի ընթացքում ընդունվել են հետևյալ որոշումները՝

- Ընդունել ի գիտություն տեղեկատվությունը, որը տրամադրվել է Շանհայի կենտրոնի՝ նոր փուլի անցման կազմակերպչական պատրաստվածության գնահատման խմբի կողմից, և հաստատել Շանհայի կենտրոնին նոր կարգավիճակի տրամադրումը՝ «Շանհայի աջակցության կենտրոն»
- Ըստ Շանհայի կենտրոնի՝ զարգացման նոր փուլի անցման չափանիշների և պայմանների (վերջիններս ընդունվել են 2019թ. Հարավաֆրիկյան Հանրապետության Քեյփթաուն քաղաքում) վերաբերյալ ՇԿՀԱ ԿԽ բանաձևի՝ պաշտոնականացնել Շանհայի կենտրոնի անվանափոխությունը «Շանհայի աջակցության կենտրոն»-ի սկսած 2023թ. հոկտեմբերի 26-ից:

Անդամավճարների հավաքագրման խնդրահարույց իրավիճակներից խուսափելու նպատակով (Բանգլադեշի համանման իրավիճակը) ՇԿՀԱ Բյուջետային կոմիտեն առաջարկել է մշակել ասոցիացիայի նոր անդամների հետ աշխատանքի ճշգրտված ռազմավարություն, մասնավորապես՝ Բանգլադեշի նմանատիպ օրինակը. հետաձգել Լոնդոնյան կենտրոնի կողմից անդամավճարի հավաքագրումը մինչ կառուցվող ԱԷԿ-ը կմիանա ցանցին:

<u>2023թ. նոյեմբերի 1-ին</u> Մինսկ գործուղման ծրագրի ավարտին կազմակերպվել է տեխնիկական շրջայց Բելառուսի ԱԷԿ: Արդեն իսկ կայանի տարածքում մասնակիցներին տրամադրվել է տեղեկատվություն՝ էներգաբլոկի շահագործման հիմնական ուղղությունների վերաբերյալ, ինչն ընդհանուր շրջայցի արդյունքների համադրությամբ նպաստել է Բելառուսի ԱԷԿ-ում գործող անվտանգության կուլտուրայի բավականին բարձր մակարդակի վերաբերյալ գնահատականի ձևավորմանը: Իմ կողմից որոշ դրական փորձի արդյունքներ առանձնացվել են, ՀԱԷԿ-ում հնարավոր կիրառման նպատակով:

Նույն օրը 2023թ. նոյեմբերի 1-ին, Բելառուսի ԱԷԿ տեխնիկական շրջայցից հետո կազմակերպվել է վերադարձը Հայաստան:

2023թ. նոյեմբերի 2-ին անցել եմ իմ աշխատանքային պարտականությունների կատարմանը:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**